

Արձանագրություն N1

«Արագածոտնի մարզի հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի ընդլայնված նիստի»

2018թ.փետրվարի 6-7-ը Աշտարակ քաղաքի «Քաղաքացիական երիտասարդական կետրոնում» տեղի ունեցավ «Արագածոտնի մարզի հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի ընդլայնված նիստ:

Հանձնաժողովի ընդլայնված նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հրավիրված էին մարզի ներառական 5 և թիվ 1 հատուկ դպրոցի տնօրեններ, սոցիալական աշխատողներ, հոգեբաններ, բժշկական կենտրոնների տնօրեններ, հաշմանդամության հիմնախնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների ղեկավարներ: Նիստին մասնակցում էին «ԱՍՀ նախարարության հաշմանդամների հիմնահարցերի բաժնի պետ Աննա Հակոբյանը, բաժնի գլխավոր մասնագետներ Ռիմա Եգանյանը և Արփինե Հայրապետյանը:

«Արագածոտնի մարզպետ, հանձնաժողովի նախագահ Ա.Սիմոնյանի հանձնարարությամբ նիստը վարում էր մարզպետի տեղակալ Ն.Մովսիսյանը: Հաստատվեց հետևյալ օրակարգը:

Օրակարգ

1.«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիա, պահանջների կատարմանն ուղղված աշխատանքները

Զեկուցող՝ Աննա Հակոբյան, «ԱՍՀՆ հաշմանդամների հիմնահարցերի բաժնի պետ»

2. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը

Զեկուցող՝ Աննա Հակոբյան, «ԱՍՀՆ հաշմանդամների հիմնահարցերի բաժնի պետ»

3. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021թթ. համալիր ծրագիր՝ ուղղությունները, պատասխանատուները, թիրախային ցուցանիշներին հասնելու միջոցառումները

Զեկուցող՝ Աննա Հակոբյան, «ԱՍՀՆ հաշմանդամների հիմնահարցերի բաժնի պետ»

4. Հաշմանդամության ոլորտում իրականացվող ծառայությունները

Զեկուցող՝ Արփինե Հայրապետյան, «ԱՍՀՆ հաշմանդամների հիմնահարցերի բաժնի գլխավոր մասնագետ»

5. ԱՀԿ ՖՄԴ՝ առողջական և սոցիալական բաղադրիչները/*Զեկուցող՝ Ռիմա Եգանյան և Արփինե Հայրապետյան՝ ՀՀ ԱՍՀՆ հաշմանդամների հիմնահարցերի բաժնի գլխավոր մասնագետներ/*

Ելույթներով հանդես եկան հանձնաժողովի անդամներ Ա.Ավետիսյանը, Գ.Դանիելյանը, Ն.Դավթյանը, Ժ.Ավետիսյանը, <<Թալին հույս>> ՀԿ-ի ներկայացուցիչ Ռուդիկ Սարգսյանը, Աշտարակի թիվ 1 հատուկ դպրոցի տնօրեն Գ.Աղաբաբյանը:

Նիստի երկրորդ օրը ներկայացվեցին մասնագիտական, տեղեկատվական թեմաներ: <<Լիարժեք կյանք>> ՀԿ-ի նախագահ, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի անդամ Սուրեն Մաղաքյանը ներկայացրեց տեղեկատվություն հասարակական կազմակերպության գործունեության մասին, կազմակերպության անդամ Մերի Ավետիսյանը՝ «Առողջապահության համաշխարհային կազմակերպության մշակած ֆունկցիաների միջազգային դասակարգիչները /ԱՀԿ ՖՄԴ/>>, անձի կենսագործունեության ու մասնակցության /կող՝d/ և միջավայրային կողերը /կող՝ e/: Զեկուցումներով հանդես եկան էրգոթերապիստ Մերի Ավետիսյանը, հոգեբան Լիանա Հարությունյանը, լրգոպեդ Աննա Մալխասյանը:

Մասնակիցներին ներկայացվեց նաև <<Լիարժեք կյանք>> ՀԿ-ի կողմից պատրաստված <<Հաշմանդամություն ունեցող 2-18 տարեկան երեխաների կենսագործունեության, մասնակցության և միջավայրային գործոնների գնահատման մեթոդական ձեռնարկը>>:

Հանձնաժողովը որոշեց.

1.Հանձնաժողովի անդամներին՝ ուսումնասիրել «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, ներկայացնել առաջարկություններ:

2.Կարևորել <<Լիարժեք կյանք>> ՀԿ-ի փորձառությունը հաշմանդամություն ունեցող 2-18 տարեկան երեխաների կենսագործունեության, մասնակցության և միջավայրային գործոնների գնահատման ուղղությամբ:

3.Առաջարկվեց հաշմանդամության հիմնահարցերով զբաղվող մարզի հասարակական կազմակերպություններին՝ խորապես ուսումնասիրել <<Լիարժեք կյանք>> ՀԿ-ի ունեցած փորձառությունը, ձեռնարկել անհրաժեշտ քայլեր՝ աջակցության նման կենտրոններ ստեղծելու նպատակով:

Հանձնաժողովի նախագահ՝

Ա.Սիմոնյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Գ.Դանիելյան